ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԲԵՐԴԱՇԵՆ , ՆՈՐՇԵՆ, ԾՈՎԱՏԵՂ, ՍՈՍ, ՎԱՐԱՆԴԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱԿՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

N 1-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2022թ. մարտի 2-ի N192-Ն §Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավարի և Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի՝ Նորշեն, Ծովատեղ, Սոս, Վարանդա համայնքների, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու մասին¦ և 2022թ. մարտի 4-ի N 208-Ա §Ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին¦ որոշումները՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ի գիտություն ընդունել, որ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքում նշանակվել է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն և Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Նորշեն, Ծովատեղ Սոս, Վարանդա համայնքներում և Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքում նշանակվել են համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ:
2. Հաստատել՝ Արցախի Հանրապետության վերոնշյալ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի ապրիլի 10-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության Մարտունու և Շահումյանի տարածքային ընտրական հանձնաժողովներին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը՝ ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

4. Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Կ.Միրզոյանին՝ կազմակերպել սույն որոշումը համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2022 թվականի մարտի 4
ք.Ստեփանակերտ

Արցախի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2022 թվականի մարտի 4-ի N 1-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի՝ Իերդաշեն համայնքի ղեկավարի, Նորշեն, Սովատեղ, Սոս և Կարանդա համայնքների ավագանու անդամների, Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Ընտրությունների օրը՝ 10 ապրիլի 2022 թվական

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (Արցախի Հանրապետության ընտրական օրենսգիրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2022թ.	Կատարող(ներ)ը
1	Դիտորդներ հավատարմագրելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	Հոդված 31, մաս 2	05.03.2022 մինչև 31.03.2022 թթ.	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներ, ԱՀ և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ
2	Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրվելու դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ***	Հոդված 31, մաս 7	05.03.2022 մինչև 26.03.2022 թթ.	Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ
3	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում են. ***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո***	Հոդված 12, մաս 2	մինչև 07.03.2022թ.	Լիազոր մարմին

4	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ***	Հոդված 140, մաս 8	մինչև 21.03.2022թ.	Լիազոր մարմին՝ մասնակցությամբ համայնքի ղեկավարի և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի
5	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ***	Հոդված 140, մաս 8	մինչև 21.03.2022թ.	Համայնքի ղեկավար
6	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***երկօրյա ժամկետում***	Հոդված 52, մաս 1, կետ 2	մինչև 23.03.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
7	Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոններում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 17 օր առաջ***	Հոդված 140, մաս 8	մինչև 24.03.2022թ.	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
8	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 և ոչ ուշ, քան 21օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	Հոդված 126, մաս 1 հոդված 140, մաս 6	16.03.2022 - 20.03.2022թթ. մինչև ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ
9	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցումը կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 21 և ոչ ուշ, քան 19 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	Հոդված 140, մաս 7	20.03.2022 - 22.03.2022թթ. մինչև ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
10	Թեկնածուների անունների հերթականությունը քվեաթերթիկում որոշելու և նշելու համար վիճակահանությունն անցկացվում է. ***գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրը***	135, մաս 1 ԱՀ ԿԸՀ որոշում N 53-Ն առ 16.01.2020թ.	22.03.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
11	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին են ներկայացվում. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20 և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	Հոդված 44, մաս 2	21.03.2022 - 23.03.2022թթ. մինչև ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ

12	Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը կայանում են. ***հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում***	Հոդված 44, մաս 5	մինչև 25.03.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
13	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է . ***թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում՝ քվեարկության օրվանից մեկ օր առաջ***	Հոդված 19, մաս 1	23.03.2022 - 08.04.2022թթ. ժամը 24.00-ն	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
14	Թեկնածուները ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	Հոդված 132, մաս 2	31.03.2022 թ. մինչև ժամը 18.00-ն	Թեկնածուներ
15	Քվեարկության օրվանից 10 օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	Հոդված 59, մաս 6	31.03.2022- 07.04.2022թթ.	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
16	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ***	Հոդված 14, մաս 1	մինչև 05.04.2022թ.	Յուրաքանչյուր ոք
17	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	Հոդված 60, մաս 3	05.04.2022- 07.04.2022թթ.	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
18	Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին դիմողը գրավոր տեղեկացվում է. ***դիմումն ստանալուց հետո՝5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ***	Հոդված 14, մաս 1	մինչև 06.04.2022թ.	Լիազոր մարմին
19	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցագրեր ուղարկվում են . ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	Հոդված 13, մաս 6	մինչև 07.04.2022թ.	Լիազոր մարմին

20	Լիազոր մարմնի կողմից կազմվող ընտրողների ցուցակներն՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրը ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	Հոդված 12, մաս 3	08.04.2022թ.	Լիազոր մարմին
21	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	Հոդված 13, մաս 4	08.04.2022թ.	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
22	Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքները հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	Հոդված 59, մաս 7, Հոդված 60, մաս 4	09.04.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
23	Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն***	Հոդված 57, մաս 3	09.04.2022թ.՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողով
24	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին***	Հոդված 64, մաս 1	10.04.2022թ.՝ ժամը 7.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
25	Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին***	Հոդված 65, մաս 1	10.04.2022թ.՝ ժամը 8.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
26	Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին***	Հոդված 69, մաս 1	10.04.2022թ.՝ ժամը 20.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
27	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում են. ***քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը,14.30-ը, 17.30-ը և 20.30-ը***	Հոդված 8, մաս 9	10.04.2022թ.	Տեղամասային ընտրական հանձնաժողով

28	Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են կենտրոնական ընտրական հանձնաժողով. ***նախորդ կետում նշված պարբերականությամբ***	Հոդված 8, մաս 9	10.04.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
29	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. ***նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո***	Հոդված 72, մաս 5	11.04.2022թ.՝ մինչև ժամը 6.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
30	Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում***	Հոդված 72, մաս 9	11.04.2022թ.՝ մինչև ժամը 8.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
31	Տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները՝ ըստ ընտրական տեղամասի աղյուսակավորվում են. ***պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ***	Հոդված 74, մաս 2	մինչև 11.04.2022թ.՝ ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
32	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	Հոդված 74, մաս 2	մինչև 11.04.2022թ.՝ ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
33	Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում. ***անհապաղ***	Հոդված 74, մաս 3	11.04.2022թ.՝ մինչև ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ
34	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	Հոդված 75, մաս 1	11.04.2022թ.՝ մինչև ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով

35	Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող են ներկայացվել միայն տարածքային ընտրական հանձնաժողով. ***քվեարկության հաջորդ օրը՝ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2-րդ օրը՝ժամը 09.00-ից մինչև ժամը 11.00-ն***	Հոդված 50, մաս 1	11.04.2022թ. ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ 12.04.2022թ.. ժամը 09.00-ից մինչև ժամը 11.00-ն	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված թեկնածու, վստահված անձ, հատուկ կարծիք հայտնած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
36	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝հաջորդ ժամկետում***	Հոդված 60, մաս 5	մինչև 13.04.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
37	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝քվեարկության օրվանից հետո՝5-րդ օրը***	Հոդված 75, մաս 2, հոդված 136, մաս 1	մինչև 12.04.2022թ.՝ ժամը 20.00-ն (բողոք լինելու դեպքում՝ 15.04.2022թ.՝ մինչև ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
38	Տարածքային ընտրական հանձնաժողովը համայնքում քվեարկության արդյունքներն ամփոփում և դրա վերաբերյալ որոշում ընդունում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 5 օրվա ընթացքում***	Հոդված 75, մաս 8	մինչև 15.04.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով
39	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները Կենտրոնական ընտրական հանձնաժողով և շրջվարչակազմի ղեկավարին ներկայացվում են. ***երկօրյա ժամկետում***	Հոդված 75, մաս 9, Հոդված 136, մաս 8	մինչև 17.04.2022թ.	Տարածքային ընտրական հանձնաժողով